600.0160.06.05.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2020 թվականի №160Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N124Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի պահպանման ծախսերի չափերը (մեծությունը) ըստ տնտեսագիտական դասակարգման տարրերի սահմանելու մասին» №124Լ որոշման՝

   1) հավելվածում «135979.2» թիվը փոխարինել «126536.2» թվով, «31197.8» թիվը՝ «21838.8» թվով, «33197.8» թիվը՝ «23838.8» թվով,

   2) հավելվածի աղյուսակը լրացնել հետևալ բովանդակությամբ 2.1-րդ կետով.

   «

2.1	411500	Այլ վարձատրություններ	18802.0

»:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղարին (Արթուր Սաֆարյան)՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի բյուջեով «Այլ վարձատրություններ»

տնտեսագիտական դասակարգման տարրին հատկացված գումարը փոխանցել Հայաստանի Հանրապետության տարածքում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման նպատակով ֆիզիկական անձանց և մասնավոր կազմակերպությունների կողմից օժանդակության ստացման նպատակով բացված պետական բյուջեի եկամտային «Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից պետությանը, կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման ապահովման համար ֆինանսական աջակցություն» № 900005001947 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
6 մայիսի 2020թ.